ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶԻ
ՏԵՂԱԿԱԼ

375010, ք. Երևան, Վ. Սարգսյանի փ. 5

№ 21/19-330-12
«25» 06 2012թ.

Հայաստանի Հանրապետության
արտաքին գործերի նախարարի
տեղակալ
պարոն Շ. Քոչարյանին

Ձեր 05.06.2012թ.
№ 16/06191 գր.

Հարգելի՛ պարոն Քոչարյան,

Ուղարկվում է 2001թ. հունիսի 11-ին կնքված «Հայաստանի Հանրապետության Կառավարության և Ամերիկայի Միացյալ Նահանգների Կառավարության միջև թմրանյութերի հսկողության և իրավապահ ոլորտում համագործակցության Նամակ-համաձայնագրում 14-րդ փոփոխությունը կատարելու մասին» արձանագրության ստորագրման նպատակահարմարության մասին տեղեկանքը:

Առդիր՝ «1» թերթ:

Հարգանքով՝

Արդարադատության երրորդ
դասի պետական խորհրդական *Ա.Դանիելյան*

Կատ. Լ.Մանուկյան
հ/ֆ 010 511 597

06300

27 JUN 2012

Տեղեկանք

«Հայաստանի Հանրապետության Կառավարության և Ամերիկայի Միացյալ Նահանգների Կառավարության միջև թմրադեղերի հսկողության և իրավապահ ոլորտում համագործակցության նամակ-համաձայնագրում 14-րդ փոփոխությունը կատարելու մասին» արձանագրության ստորագրման նպատակահարմարության մասին

«Հայաստանի Հանրապետության Կառավարության և Ամերիկայի Միացյալ Նահանգների Կառավարության միջև թմրադեղերի հսկողության և իրավապահ ոլորտում համագործակցության մասին» նամակ-համաձայնագրում առաջարկվող 14-րդ լրացումը կատարելու մասին Արձանագրություն կնքելու նախաձեռնությամբ հանդես է եկել Ամերիկայի Միացյալ Նահանգների Կառավարությունը:

Արձանագրության համաձայն ԱՄՆ Կառավարությունը լրացուցիչ ֆինանսավորում է տրամադրում Հայաստանի Հանրապետության Կառավարությանը հետևյալ ծրագրերի համար. մշտական իրավական խորհրդատուի ծրագիր, մարդկանց առևտրի (թրաֆիքինգի) դեմ պայքար, Փրոջեքթ համոնիի ՁԱՆԳ, Ամերիկյան իրավաբանների ընկերակցության իրավունքի գերակայության նախաձեռնության քրեական իրավունքի բարեփոխումների ծրագիր, իրավապահ ոլորտի զարգացում, քրեակատարողական հիմնարկների զարգացում, փողերի լվացման դեմ պայքարի կարողությունների զարգացում և քրեափորձագիտական լաբորատորիայի զարգացում:

Ընդհանուր հաշվով Հայաստանի կառավարությանը կտրամադրվի 2.416.585 ԱՄՆ դոլարի չափով լրացուցիչ ֆինանսական աջակցություն, ինչը լուրջ խթան կհանդիսանա ՀՀ քրեադատավարական օրենսդրության կատարելագործման, ՀՀ դատախազության և մյուս իրավապահ մարմինների ինստիտուցիոնալ բարեփոխումների, ինչպես նաև անդրազգային հանցավորության դեմ պայքարի արդյունավետության բարձրացման համար:

ՀՀ և ԱՄՆ կառավարությունների միջև կնքված նամակ համաձայնագրի 14-րդ փոփոխմամբ նախատեսվում է հատկացնել ֆինանսավորում՝ 750.000 ԱՄՆ դոլար մշտական իրավախորհրդատուի, 300.000 ԱՄՆ դոլար մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի, 248.585 ԱՄՆ դոլար Փրոջեքթ համոնիի ՁԱՆԳ, 300.000 ԱՄՆ դոլար Ամերիկյան իրավաբանների ընկերակցության իրավունքի գերակայության նախաձեռնության քրեական իրավունքի բարեփոխումների, 200.000 ԱՄՆ դոլար իրավապահ ոլորտի զարգացման, 250.000 ԱՄՆ դոլար քրեակատարողական հիմնարկների զարգացման, 50.000 ԱՄՆ դոլար փողերի լվացման դեմ պայքարի կարողությունների զարգացման, 50.000 ԱՄՆ դոլար քրեափորձագիտական լաբորատորիայի զարգացման ծրագրերի համար:

Ելնելով վերը նշվածից, նպատակահարմար է «Հայաստանի Հանրապետության Կառավարության և Ամերիկայի Միացյալ Նահանգների Կառավարության միջև թմրադեղերի հսկողության և իրավապահ ոլորտում համագործակցության մասին» նամակ-համաձայնագրում առաջարկվող 14-րդ լրացումը կատարելու մասին Արձանագրության ստորագրումը:

Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազություն